

ԶՕՐԱՎԱՐ ԱՐԱՄ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԿԵԱՆՔԸ ՈՒ ԳՈՐԾԸ
THE LIFE AND WORK OF GENERAL ARAM KARAMANOUKIAN

ԶՕՐԱՎԱՐ
ԱՐԱՄ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆԻ
ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Հեղինակ՝
ՅԱՍՄԻԿ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ



Խմբագիր՝
ԿԱՐՊԻՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՖՈՐԹ ԼԻ, ՆԻԻ ՃԸՐՁԻ, ԱՄՆ
1998

ՎԵՐՁԻՆ «ՀԱՅՐ ՄԵՐ»Ը

Զիս դիմաւորեց ազնիւ Տիկին Յասմիկ, եւ առաջնորդեց իր ամուսնոյն՝ Զօր. Արամ Գարամանուկեանի ննջասենեակը, ուր անկողնին մէջ կը հանգչէր անոր մահամերձ մարմինը: «Քանի մը օրէ ի վեր կարծէք հոգեվարքի վիճակին մէջն է, եւ բժիշկները յոյս չեն ներշնչեր...», խոր մտահոգութեամբ եւ արտասուլից աչքերով ըսաւ Տիկին Յասմիկ: Հիւանդտեսի գացած էի, սակայն կը զգայի որ հայ ժողովուրդի այս արժանաւոր գաւակին պէտք է մատակարարէի Ս. Հաղորդութիւն եւ աղօթք մատուցանէի առ Բարձրեալն՝ ընդունելու անոր յոգնաբեկ հոգին:

Դիմացս, մահիճին վրայ գրեթէ անշարժ պառկած էր այն հերոսը, որուն քաջագործութիւնները, առասպելական հանդերձ զգեցած, բերնէ բերան կը տարածուէին: Նշանաւոր հայորդի մը՝ որ իր ամբողջ կեանքը ապրեցաւ արտերկրի մէջ՝ սակայն իր հոգիին ու սրտին մէջ միշտ վառ պահեց Մայր Հայրենիքի եւ Հայ ժողովուրդի սէրը:

Զօրավար Արամ Գարամանուկեան, սխալած չեմ ըլլար եթէ ըսեմ, Միջին Արեւելքի մէջ առաջին եւ միակ հայորդին էր, որ իր տաղանդին եւ ռազմական հնարամտութիւններուն ու կարողութիւններուն շնորհիւ արժանացաւ զինուորական այս բարձր աստիճանին: Սուրիական բանակի ծանր ու թեթեւ հրետանիի այս զօրավարը ամենէն աւելի պարգեւատրուած բարձրաստիճան զինուորականն էր թէ Սուրիական, թէ Եգիպտական եւ թէ Ֆրանսական կառավարութիւններուն կողմէ: Տրուած ըլլալով որ ան իր ռազմական ուսումը ստացած էր Ֆրանսայի մէջ, երբ Ֆրանսական բանակը հեռացաւ սուրիական հողամասէն՝ Ֆրանսական կառավարութիւնը հրաւիրեց զինք արեւմուտքի մէջ ծառայելու, սակայն ան նախընտրեց ծառայել սուրիական բանակին՝ որպէս երախտագիտական արտայայտութիւն այն երկրին ու ժողովուրդին՝ որոնք

գրկաբաց ընդունեցան ու ապաստան տուին թրքական ցեղապանութենէն եւ Տէր Զօրէն մագապուրծ հայ բեկորներուն: Գարամանուկեան ընտանիքն ալ Այնթապէն գաղթած էր Սուրիա եւ բնակութիւն հաստատած Հալէպ:

Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանին մէջ ուսանողութեանս շրջանին լսած էի զօրավար Արամ Գարամանուկեանի արձանագրած յաջողութիւններուն մասին: Կը պատմուէր որ ան ունէր ռազմական ճշգրիտ ըմբռնողութիւն եւ անոր հրետանիի արձակումները, հակառակ ցամաքային միջոցի հեռաւորութեան, առանց բացառութեան կը հարուածէին իրենց թիրախները: Եւ տակաւին կը պատմուէին անոր գանազան տեսակի քաջագործութիւններուն մասին: Այդ շրջանին մեծ փափաք ունէի հանդիպելու եւ ձեռքը սեղմելու զօրավար Արամ Գարամանուկեանի:

Այս փափաքս իրականացաւ շատ տարիներ ետք՝ Նիւ Եորքի մէջ, երբ Առաջնորդարանին մէջ հանդիպեցայ զօրավար Արամ Գարամանուկեանին: Դիմացս գտայ համեստ, առաքինի եւ պարզ հայրդի մը՝ որուն արտաքինը ոչինչ կ'ըսէր անոր ռազմական տաղանդին, քաջագործութիւններուն եւ առասպելական սիրանքներուն մասին: Եւ մեր յաջորդ հանդիպումներուն ընթացքին եւս ան երբեք չխօսեցաւ իր զինուորական կեանքին մասին, չըսաւ որ հանգստեան կոչուելէ ետք՝ դացած էր Ֆրանսա եւ հետեւած իրաւաբանութեան եւ իր աւարտաճառը պատմական եւ զինուորական մեծարժէք աշխատասիրութիւն մը եղած էր: Ան չըսաւ որ եղած էր Սուրիական խորհրդարանի անդամ եւ Սուրիոյ զինուորական պաշտօնակատարը Ուաշինկթըն Տի. Սի. ի մէջ: Այս բոլորը ըսելու կարիքը չկար արդէն, որովհետեւ անոր համբաւը իրմէ առաջ հասած էր բոլորին: Մեր հանդիպումներու ընթացքին ան խօսեցաւ միայն ազգային հարցերու եւ մտահոգութիւններու մասին: Ան եկեղեցասէր ու հաւատացեալ անձնաւորութիւն մ'ընէր: Ամէն անգամ Առաջնորդարան կը հեռաձայնէր հարցնելու համար թէ շաբթու մէջ հանդիպող տաղաւար տօներուն Ս. Պատարագ պիտի մատուցուէ՞ր Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ: Զօրավար Գարամանուկեան եւ իր ազնիւ տիկինը յաճախներկայ կը գտնուէին, կրօնական արարողութիւններէն անկախ, մշակութային եւ հրապարակային ձեռնարկներու:

Ճշմարիտ եւ հարազատ արժէքներ ունեցող անձերն են որ ամենէն համեստ մարդիկը կ'ըլլան: Զօր. Արամ Գարամանուկեան կը ներկայացնէր տիպարը այդ դասակարգին:

Այս խորհրդածութիւններով տարուած էի, եւ տակաւին միտքս կը սաւառնէր այլ եւ այլ մտածումներու վրայ ... երբ յանկարծ նշմարեցի զօրավարին մարած աչքերուն խնդրարկու հայեացքը ինծի ուղղուած: Զգացի որ ան բան մը կը խնդրէր ինձմէ...: Հաւատացեալ մահամերձի վերջին խնդրանքը աղօթքի միջոցաւ իր հոգին Արարիչին յանձնելն է: Ս. Հաղորդութիւնը մատակարարելէ ետք՝ ձախ ձեռքովս բռնեցի անոր ձեռքը եւ աղովս խաչակնքելէ ետք՝ «Հայր Մեր»ը արտասանեցի: Զգալի էր որ անոր շրթունքները կը շարժէին եւ ան ինծի հետ կ'արտասանէր Տէրունական Աղօթքը: Ապա, աչքերը փակեց եւ թեթեւ ժպիտ մը գծագրուեցաւ անոր պարտասած դէմքին վրայ: Հոգին խաղաղած էր:

Այս աղօթքը Զօր. Արամ Գարամանուկեանի վերջին «Հայր Մեր»ը եղաւ անցաւոր այս աշխարհին վրայ:

* * *

Միջազգային համբաւի տիրացած եւ հոգեկան ազնիւ առաքինութիւններով օժտուած այս հայորդիին աճիւնները փոխադրուեցան եւ յանձնուեցան հայրենի հողին, որուն երազովն ու կարօտովը ապրեցաւ ան:

Անձնապէս ներկայ գտնուեցայ եւ ականատես եղայ թէ ինչպէս Մայր Հայրենիքը պատուեց իր հարազատ զաւակը, որ իր ամբողջ կեանքին ընթացքին միշտ բարձր պահեց Մայր Հայրենիքին եւ Հայ ժողովուրդին փառքն ու պատիւը:

Խաժակ Ա. ր. ք. Պարսամեան

ԽՄԲԱԳՐԻՆ ԽՕՍՔԸ

**ԶՕՐԱՎԱՐ ԱՐԱՄ
ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՒ
ԻՐԱԴԱՐԶՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍՈՒՐԻՈՅ
ՄԷՁ**

Այս հատորով կը ներկայացուի Զօրավար Արամ Գարամանուկեանի կեանքի պատմութիւնը և գործը, գրի առնուած իր կեանքի ընկերուհիին՝ Յասմիկ Գարամանուկեանի կողմէ, այն շրջանին երբ Հայկ պը բնակէին: Գիրքին երկրորդ մասը յատկացուած է Զօրավարին «Օտարները Եւ Զինուորական Ծառայութիւնը» վարդապետական (տոքթորա) աշխատասիրութեան այն գլուխին, որ նուիրուած է Հայկական Լեզէոնին, և որ հրատարակուած է Երուանդ Քասունիի խմբագրած «Հայկազեան Հայագիտական Հանդէս»ին մէջ, Պէյրութ, 1974: Գիրքին երրորդ և չորրորդ մասերը կը հանդիսանան արձագանգը Զօրավար Արամ Գարամանուկեանի կեանքի և ասպարէզի զանազան երեսներուն, իր մահուան, և Հայաստանի Նոր Այնթապ աւանի դպրոցին վերանորոգման ու վերանուանումին որպէս Արամ և Յասմիկ Գարամանուկեան Վարժարան: Այս բաժիններով տրուած են ցաւակցական նամակներ և հեռագիրներ, ինչպէս նաև կարգ մը յօդուածներ՝ լոյս տեսած հայ թէ օտար մամուլի մէջ: Հոս տրուած են նաև վկայութիւններ՝ ի մասին Զօրավարին քաղաքական գործունէութեան, Սուրիոյ խորհրդարանի անդամ ընտրութենէն ետք. իր Այնթապցի հայրենակիցներուն հետ պահած յարաբերութիւններուն. Հայաստան իր այցելութիւններուն. հայրենիքի և հայ կեանքի հետ իր սերտ կապերուն. Հայաստանի քաղաքացի նշանակումին. գրական կեանքի և գրողներու թէ արուեստագէտներու հետ իր յարաբերութիւններուն. մէկ խօսքով՝ կեանքի բազմազան երեսներուն: Յարակցաբար, հոն կը գտնենք իր զէնքի

ընկերներու վկայութիւնները և նմոյշներ իր նամակագրական կապերէն: Այս բոլորը, ինչպէս նաև գիրքով ներկայացուող նկարներն ու վաւերաթուղթերը մեր կարելիութեան սահմանին մէջ, օժանդակութեամբ Տիկին Յասմիկ Գարամանուկեանի, հաւաքած ու դասաւորած ենք Զօրավարին արխիւէն:

Զօրավարը կատարելապէս ներկայացնելու ո՛չ մէկ յաւակ-նութիւն ունինք: Մերը՝ սիրոյ և գնահատանքի գործ մըն է: Պարզապէս կը յուսանք որ այս հրատարակութիւնը արթնցնէ հետաքրքրութիւնը մասնագէտ հեղինակներու, որոնք հանդէս գան այլալեզու նոր հրատարակութիւններով՝ Զօրավարին պատգամը փոխանցելու նոր սերունդներուն:

Զօրավար Արամ Գարամանուկեանի տարողութեամբ գին-ուորական դեկավար մը աւելի լաւ ճանչնալու համար, հարկ է նաև մի քանի խօսք ընել անոր ապրած և գործած ժամանակաշրջանին ու միջավայրին մասին, որովհետև եզակի մարդու մը համար եզակի ժամանակաշրջան մը ապրեցաւ Սուրիան մասնաւորապէս և ամբողջ Միջին Արևելքը ընդհանրապէս:

Զօրավարին գինուորական գործունէութիւնը կը պար-փակէ փոթորկալի շրջան մը, որ կը սկսի 1932-ին և վերջ կը գտնէ 1958-ին: Քսանվեց տարիներու այս ժամանակահատուածը Սուրիական Արաբական Հանրապետութեան ժամանակակից պատմութեան ամենաալեկոծ, ամենայեղափոխական, ամենա-վճռական շրջանն է:

Մօտ չորս դարերու օսմանեան տիրապետութենէ ետք, Սուրիա դրուած էր Փրանսական հոգատարութեան տակ. հոն հաստատուած էր Փրանսական գաղութարար իշխանութիւն: Օսմանեան տիրապետութեան շրջանին գործուած անիրաւու-թիւններուն և աւերներուն վրայ եկած էին աւելնալու Փրան-սական իշխանութիւններու գործած աւերները, որոնց ամե-նաաչքառուները եղան ներքին համայնքային բաժանումները, ընկերային անարդարութիւնները և, վերջապէս, Ալեքսանտրէ-թի նահանգին անջատումը Սուրիայէն և կցումը Թուրքիոյ:

1945-ին երբ Սուրիա ձեռք կը ձգէր իր անկախութիւնը, երկրին մէջ տակաւին կը տիրէին համայնքային, ընկերային և դասակարգային անարդարութիւններ: Ճնշուած դասակարգեր ու համայնքներ արդար լուծումներ կը հետապնդէին անկախ Սուրիոյ մէջ: Կարելի է ըսել թէ ամբողջ երկիրը հրաբուխի

վրայ նստած էր քաղաքական տեսակէտէ: Ազգայնական, ինչ-պէս նաև ընկերային ու ընկերվարական շարժումներ բեռնացուցած էին մտաւորականութիւնը, երիտասարդութիւնը և բանակի երիտասարդ սպաները, որոնք մեծ մասամբ կու գային գիւղական շրջաններէ և ճնշուած դասակարգերէ: Այս բոլորին կու գային աւելնալ 1947-ի Պաղեստինի պատերազմը և Իսրայէլի պետութեան հիմնումը:

Մինչ Զօրավար Արամ Գարամանուկեան, որպէս գտարիւն զինուորական և սուրիական հրետանիի հրամանատար, իր առասպելական հմտութեամբ և քաջագործութեամբ սուրիական բանակի այլ զօրաբաժիններու հետ պատուաբեր յաջողութիւններ կ'արձանագրէր ուսումնական տարիներ վրայ, միջազգային քաղաքականութիւնը կը վճռէր պատերազմին ելքը: Այս բոլորին մասին շատ քիչ կը խօսէր Զօրավարը, որ, անկասկած, շատ գաղտնիքներ տարաւ հետը: Հագուադէպ առիթներով միայն ան կը յայտնէր իր դժգոհութիւնը՝ թէ քաղաքականութիւնը աւելի զօրաւոր է քան զէնքը:

Գաղափար մը տալու համար Սուրիոյ պայթուցիկ կացութեան և հոն իրարու յաջորդող պետական հարուածներուն մասին, տեղին կը գտնենք ներկայացնել քանի մը թուականներ.–

- 1941-ին, պատերազմ Վիշիական բանակներու և դաշնակից անկլո-Ֆրանսական ուժերու միջև:

- 1945-ին, Սուրիա կ'ըմբոստանայ գաղութարար Ֆրանսական ուժերու դէմ և կը տիրանայ անկախութեան: Զօրավար Արամ Գարամանուկեան կը միանայ սուրիական բանակին:

- 1947-ին, տեղի կ'ունենայ Պաղեստինի պատերազմը և կը հաստատուի Իսրայէլի պետութիւնը:

- 1949 Մարտ 30-ին, կը պատահի առաջին զինուորական պետական հարուածը Հիւսնի Չայիմի գլխաւորութեամբ: Այլ պետական հարուածներ կը յաջորդեն անոր:

- 1949 Օգոստոս 14-ին, զինուորական բռնահարուած՝ Սամի ալ Հիննաուրի կողմէ:

- 1949 Դեկտեմբեր 19-ին, զինուորական բռնահարուած՝ Ատիպ Շիշաքլիի կողմէ:

- 1954-ին, պետական հարուած՝ Հալէպի սպաներու խումբին կողմէ:



Զօրավար Արամ Գարամանուկեան և Կարպիս Գազանճեան մտերմիկ գրոյցի մը պահունք:

- 1958 Փետրուար 22-ին, միութիւն՝ Եգիպտոսի հետ:

- 1961 Սեպտեմբեր 28-ին, խզում՝ Եգիպտոսի հետ և կարճատե խորհրդարանական-նախագահական իշխանութիւն:

Այսպիսի անկայուն, փոթորկալի շրջանի մը կը զուգադիպի Զօրավար Արամ Գարամանուկեանի զինուորական ծառայութեան մէկ կարևոր հանգրուանը, երբ պետական հարուածներու մասնակիցներէն շատեր եղած էին Զօրավարին պաշտօնակիցները կամ աշակերտները: Զօրավարը, սակայն, մասնակից չդարձաւ այդ բռնահարուածներուն. ան մնաց զտարին զինուորական: Եգիպտոսի հետ միութեան շրջանին, բազմաթիւ այլ բարձրաստիճան սպաներու հետ, Զօրավարն ալ կոչուեցաւ հանգստեան, երբ տակաւին 48 տարեկան էր և շատ բան ունէր տալիք իր հայրենիքին: Սուրիական բանակի պատմութեան մէջ, սակայն, Զօրավարին անունը մնաց արձանագրուած որպէս հայրենասէր հաւատարիմ, համեստ, քաջարի և բարձր մասնագիտութեան տէր զինուորական:

1961-ին, երբ Սուրիոյ մէջ պիտի հաստատուէր խորհրդարանական իշխանութիւն՝ ընտրութիւններու միջոցով, հանգստեան կոչուած բանակայինը յանուն սուրիական հայրենիքին և հայ ժողովուրդին միասնականութեան, նետուեցաւ քաղաքական ասպարէզ և ընտրուեցաւ երեսփոխան:

Այսքանը բաւարար պիտի ըլլար անհատի մը կեանքի իրագործումներուն որպէս կենսագրական: Սակայն Զօրավարին համար կը բացուէր նոր ասպարէզ մը տարբեր կեանքի: Հանգստեան կոչուիլը հանգիստ չէր նշանակեր:

1964-ին ետք Զօրավարը հետևեցաւ իրաւաբանութեան և տիրացաւ տոքթորական տիտղոսի: Առանց վարանելու կրնանք ըսել թէ Զօրավար Արամ Գարամանուկեան, զինուորական և ակադեմական ասպարէզներու մէջ իր կատարած իրագործումներով, կը ներկայացնէ երկու կեանքի տևողութիւն:

Զօրավարը մօտէն ճանչնալու բախտաւորութիւնն ու մենաշնորհը ունեցայ վերջին տարիներուն, երբ ան հաստատուած էր Նիւ Ճըրզի, Միացեալ Նահանգներ: Անոր համեստ արտաքինին տակ թագնուած էր մեծ զինուորական մը, մեծ մարդ մը, մեծ հայրենասէր մը, որուն կեանքն ու գործը, անկասկած, ո՛չ միայն պիտի դառնան օրինակելի նոր սերունդներու համար, այլև պիտի ամրապնդեն հայ և արաբ ժողովուրդներու կապերը:

ԿԱՐՊԻՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ

BIOGRAPHY OF GENERAL ARAM KARAMANOUKIAN

General Aram Karamanoukian was born in Aintab in 1910 to a prominent family. His father was an attorney. Following the evacuation of the Armenians from Aintab, the Karamanoukian family settled in Aleppo.

In 1932, Aram entered the Syrian military academy; owing to his exceptional aptitude, he was sent to France where he received advanced military training in the field of artillery. In 1945 he enrolled in the officer training program in Paris and graduated with the rank of officer.

In 1946, when Syria gained its independence and the French troops withdrew, Karamanoukian joined the Syrian National Army in which he became one of the officers who organized the newly created army. In 1949, he was named commander in chief of the Syrian Army's artillery, a position which he held until 1957 when he was assigned to Washington, DC, as a military attaché in the Syrian embassy. Meanwhile, in 1953, he received the rank of general.

The General became a prominent military officer owing to his top professionalism, strict discipline and expertise in the field of artillery. As commander in chief of the artillery division, he participated in the Palestinian war of 1948. He is the only Armenian commander, having served in the Syrian Army, who has been awarded various medals of honor, not only by the Syrian but also the governments of Lebanon, Egypt, and France. H.H. Karekin II, Catholicos of the See of Cilicia, bestowed upon him the Knight of Cilicia medal, while H.H. Catholicos Vazken I granted him the Nerses Shnorhali medal. He received his final medal only several weeks before his death in his home (the General was already critically ill) from Archbishop Mesrob Ashjian, Prelate, on behalf of H.H. Aram I, Catholicos of the See of Cilicia. In all three cases the medals of honor were accompanied by encyclicals.

STINT IN WASHINGTON, DC

In 1957, during his stint in Washington, DC, General Karamanoukian met and in 1958 married Miss Hasmig

Meghrigian, a young Armenian woman living in the U.S., whose roots stretch back to Sassoon.

For several generations of Armenians living in the Middle East General Karamanoukian's name was legendary. He was a source of inspiration and pride. As far as the Arab people were concerned, he symbolized the further strengthening of ties between the Syrian and Armenian peoples.

On account of the tremendous instability within the Syrian government during the early 1960's, when one weak regime followed another, sometimes once every few months, General Karamanoukian decided to retire in 1964, at the age of 54, after having served for 32 years. His retirement was attended by all the honors of a high-ranking military officer. He had wished to remain strictly an officer, with no political aspirations whatsoever.

ALERT MIND, HEALTHY BODY

Inasmuch as the word "retirement" had no meaning for the prominent general with an alert mind and healthy body, he decided to pursue law courses first at St. Joseph University in Beirut and then at the Sorbonne University in Paris, from where he graduated with a LLD degree in International Law. His thesis was on "Foreigners and Military Service," based on sources found in the French state archives. A significant part of his thesis was devoted to the Armenian Legion in the French Army.

In the ensuing years, after he immigrated to the U.S., the General turned his Fort Lee (NJ) home into a chief of staff's headquarters, from where he would follow world affairs, developments in Armenia and life in the Diaspora. In particular, he used to keep track of what was happening in the life of each member of the Karamanoukian Family which had been scattered across the world, and maintain contact with his old comrades in arms. The newly independent Republic of Armenia and the evolution of events there were his main concerns in his last years. He kept his fingers on the pulse of Armenian life. He read, spoke and traveled. He often took trips to Europe, the Middle East, and Armenia. He had relatives, friends, and comrades in arms everywhere he went, not to mention unforgettable memories.

During his last years, when I enjoyed a close relationship with him, I witnessed how Armenia's independence, the struggle and war for Artsakh's independence made up part of his daily sustenance. Armenia meant everything to him. He went to Artsakh and visited the battle fronts. Although, General Karamanoukian was a man of few words, he couldn't help but display the excitement he felt as a military man the day when the Armenian Self Defense Forces captured Kelbajar. As I looked at the map, I could hear him exclaim in French over the phone, "Ooh la la, Ooh la la...."

LAST DAYS

General Karamanoukian, apparently foreseeing that his days were numbered, embarked on a final tour in September 1996. He went to Paris, then Armenia, Beirut, Aleppo and Damascus. He visited those who were still alive and the graves of those who had departed in the interim, particularly that of his brother, Levon, who had died recently. The son of a patriotic family, his brother Levon had repatriated to Armenia; today, his two sons hold important positions in the Armenian government [Shahen was the Chief-of-Staff of President Levon Der Bedrosian—now he is the Chief-of-Staff of the Prime Minister's Cabinet—while his brother Nerses is head of the financial affairs department of the Mother See in Etchmiadzin]. He was proud of their work and Armenia. While there, he decided to donate the medals of honor he had received to the State Museum of Armenia which he did.

Since he had many comrades in arms in Syria, he visited those still living and paid his respects to those having passed away. He even traveled to the distant town of Kordaha near Latakia, to pay his respects at the grave of the prematurely deceased son of Syrian President Hafiz el Assad, his former comrade in arms. That was the kind of man the General was; he respected the proper order of things, be it military or civil.

Upon his return, he was very tired and sick. He was like an injured eagle having fallen on the mountain top, his wings spread, one toward Armenia, the other toward Syria, his other fatherland. The general was injured with a fatal disease which, in medical terms, is called cancer. However, just as

Karamanoukian had arranged his entire life according to military law and order, so had he also dictated his will.

ORIGINAL WILL

That is what the general had wanted and that is how he drew up his will. He belonged to Armenia; at the same time, he belonged to Syria where he would strengthen the friendship between the Armenian and Syrian peoples through his past service and symbolic presence. Consequently, he made an unorthodox decision: to be cremated and have his ashes divided into two parts. Half to be buried in Armenia. The other half to be buried in Aleppo, Syria, where his parents and comrades in arms are buried. A land, a country, to which the Armenian people owe so much.

During my adolescent and young days, the name Karamanoukian was already legendary. It was said about him that he made such accurate mental calculations involving the artillery that their target would be struck without fail, even if the latter were not visible.

It so happened, through a stroke of fate, that I was to enjoy a close association with General Karamanoukian in New Jersey through frequent mutual visits and get-togethers. His presence among us was a pleasure and a privilege. I had the opportunity to get to know him not only as a man who aspired to perfection but also as a social being who maintained strong ties with his friends and relatives. I saw in him a military man cast with strong patriotic ties, whose large heart nevertheless had its soft spots.

With his death, he thus returns to his mythical world and becomes immortal for us mortals. I am convinced that his remains, his will shall serve to strengthen patriotic feeling and, in Aleppo, the forging of closer fraternal links between the Armenian and Syrian peoples.

GARBIS KAZANDJIAN


(Published in the January 11, 1997 issue of "The Armenian Reporter International")

BIOGRAPHY OF HASMIG KARAMANOUKIAN AUTHOR OF THIS BOOK

Hasmig Karamanoukian is the sixth child of her parents Meguerditch and Yacout Meghriqian.

Both her grand fathers and her father were merchants and landlords in Sassoun, Armenia.

Except for her parents, all the numerous members of the family became victims of the Armenian genocide of 1915.



**Թանկագին գանձ մը երջանկաշիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց
Կաթողիկոսէն Տկն. Յասմիկ Գարամանուկեանին:**
**Զօրավարն ու Տկն. Յասմիկը ամէն անգամ իրենց Հայաստան
 ալցելութեան կը հանդիպէին Ս. Էջմիածին՝ աջահամբոյր տալու
 Վեհափառ Հայրապետին, որ ի յիշատակ իրենց ջերմ սիրոյն՝ Տիկին
 Գարամանուկեանին նուիրած է 1969-ին Ս. Էջմիածնի մէջ
 հրատարակուած Նոր Կտակարան մը, մակագրելով զայն:**
**Տկն. Գարամանուկեան այս Աւետարանը կը պահէ որպէս թանկագին
 գանձ ու յիշատակ:**


During the First World War the family lived in Aleppo, Syria; then moved to Beirut, Lebanon, where little Hasmig attended kindergarten, and in 1925, the family moved to Paris, France. In 1934 finally they settled in New York, NY, USA.

In 1958, she was married to General Aram Karamanoukian and followed her husband wherever he had to go. Also they traveled extensively as tourists.

Since early childhood, painting was her main hobby which she pursued during her years in Paris, when the General was working on his Doctor's Degree of International Law at the Sorbonne University in Paris, France.

She speaks fluently Armenian, French, English, and understands German, Arabic, and Turkish.

At present her last wishes are to write the memoirs of her husband, and to renovate a school in "Nor Aintab," Armenia, in memory of General Aram Karamanoukian, who brought honor to his family and his people.



Ա. ՄԱՍ

**ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
ԶՕՐԱՎԱՐ
ԱՐԱՄ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆԻ**

Յասմիկ Գարամանուկեան

ՓՈԽԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԻ

Այս գրութիւնը նուիրուած է ամուսնոյս՝ Զօրավար Արամ Գարամանուկեանի կեանքին: Թէ ինչո՞ւ այս տողերը: Պարզապէս՝ արդար և օգտակար գործ մը կատարած ըլլալու համար: Արդա՛ր՝ քանզի Զօրավարը պէտք եղածին չափ ճանչցուած չէ իր բոլոր յատկութիւններով և գործունէութեամբ, հակառակ անոր որ իր անունը ծանօթ է ո՛չ միայն Սուրիոյ և Լիբանանի հայութեան, այլ նաև ամէն տեղ հայ սփիւռքի մէջ, և նոյնիսկ Հայաստան: Օգտակա՛ր՝ քանզի իր կեանքը կրնայ օրինակ ծառայել հայ երիտասարդներու: Օրինակելի կեանք մը ապրեցաւ ան մինչև վերջ. պարզ, համեստ, սակայն տարիներու շարք մը՝ անխոնջ աշխատանքի, պողպատէ կամքի, ազգասիրութեան:

Հակառակ տարիներէ ի վեր ունեցած փափաքիս, եթէ այսօր միայն –25 Յունիս 1974–ին– կը սկսիմ թուղթին յանձնել այս տողերը, պատճառը Պէյրութի «Զարթօնք» օրաթերթի 4 Յունիս 1974 թուակիր համարին մէջ Տոքթ. Ա. Խաչատուրեանի ստորագրած գրութիւնն է Զօրավարին մասին:

Արդարև, յարգելի բժիշկը հարց կու տայ. «Ո՞ր խօսնակը պատմել պիտի տայ մերինին՝ իր ինքնակենսագրութիւնը», և կ'աւելցնէ. «Անոր արժանիքը ձեռնհասօրէն վեր առնելու համար, լոյս ընծայելու է մենագրութիւն մը, որուն ընթերցումը իստ հրահանգիչ և շահեկան պիտի ըլլայ մեր արդի արծուաբիբ երիտասարդութեան համար»: Տոքթ. Խաչատուրեանի այս տողերն են որ զիս մղեցին Զօրավարին մասին գրելու:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՍ ԳՐՈՒԹԵԱՆ

Թերևս ընթերցողներէն ոմանք յուսախաբ ըլլան՝ կարծելով գտնել այս էջերուն մէջ զգայացունց բաներ, քաղաքական ու զինուորական գաղտնիքներ, քանի որ Զօրավարը իր վարած պատասխանատու պաշտօններուն պատճառաւ շատ բա-

ներ գիտէր Երկրորդ Ընդհանուր Պատերազմի վերջաւորութեանէն յետոյ Մերձաւոր Արևելքի մէջ պատահած դէպքերէն:

Այդ մասին պիտի չգրեմ, որովհետև տեղեկութիւն չունիմ: Զօրավարը, ինչպէս պիտի տեսնենք այս գրութեան մէջ, շատ քիչ կը խօսէր իր անձին մասին, նոյնիսկ այնպիսի հասարակ հարցերու մասին՝ որոնց հանրութիւնը ծանօթ էր: Նաև՝ ոչինչ այնպիսի հարցերու մասին, որոնք հանրութեան առջև արծարծուած կամ արծարծուելիք բաներ չէին:

Գրութիւնս պիտի պարունակէ Զօրավարին նկարագրին ցայտուն գիծերը և հակիրճ կենսագրութիւնը, այն չափով որ ես կարողացայ զինք ճանչնալ 38 տարիներու մեր կենակցութեան ընթացքին:

Ի՞նչ էն ԳՐՈՒԹԵԱՆՍ ԱՂԲԻԻՐՆԵՐԸ

Նախ, ամուսնանալէս ի վեր (38 տարիներ պատիւը ունեցած եմ իր կողակիցը ըլլալու) ականատեսի ծանօթութիւններս և իրմէ լսածներս:

Ինչ կը վերաբերի Զօրավարէն լսածներուս, շատ ճոխ չեն, որովհետև իր մասին խօսիլ չէր սիրեր: Գրութեանս մէջ, հետևաբար, մեր ամուսնութենէն յետոյ պատահած դէպքերու վերաբերեալ էջերը բնականօրէն աւելի մանրամասն պիտի ըլլան:

Լսածներս կու գան իր ընտանիքի անդամներէն: Այս տեսակէտով շատ բան իմացայ մօրմէն, որ բոլոր մայրերու պէս կը սիրէր պատմել իր զաւակին մասին: Զօրավարին եղբայրները և քոյրերը, ինչպէս նաև անոնց զաւակներն ալ կը սիրէին խօսիլ իր մասին, սակայն իր բացակայութեան:

Իր բարեկամներէն և մասնաւորաբար պաշտօնակիցներէն լսածներս ալ շատ օգտակար եղան. շատ կը յարգէին զինք այս վերջինները, և երբ Հալէպ այցելէին անոնք, կամ Զօրավարը իր ճամբորդութեանց ընթացքին հանդիպէր անոնցմէ մէկուն, բնականաբար խօսք կը դառնար անցեալի իրենց պաշտօնավարութեան մասին: Կը վերակոչէին պատահարներ, որոնք յաճախ նորութիւն կ'ըլլային ինծի համար: Եւ երբ Զօրավարին գործունէութեան մասին իր ընկերները կ'արտայայտուէին՝

ըսելով: «Կը յիշե՞ս երբ ասանկ ըրինք...», կը բաւականանար հաւանութիւն յայտնելով կամ փոքր սրբագրութիւն մը կատարելով:

Թերթերու մէջ գրութիւններ նոյնպէս աղբիւր եղան: Կան իր մասին գրութիւններ, թէև ո՛չ ամբողջական: Ասոր ալ պատասխանատուն Զօրավարն էր, որովհետև կը մերժէր որ իր մասին գրեն: տարբեր հոսանքներու պատկանող հայերէն թերթերու մէջ հրատարակուած գրութիւնները իր ընտանիքի անդամներէն քաղուած տեղեկութիւններ են՝ յաճախ անկատար, երբեմն ալ սխալ: Զօրավարը չէր պահած այդ թերթերու կտրօնները: Եղբայրը՝ Լևոն, հաւաքած էր զանոնք և ինծի յանձնեց, երբ 1965-ին հայրենիք ներգաղթեց: Այդ թուականէն սկսեալ կը պահեմ ձեռքս հասած գրութիւնները:

Զօրավարը ունէր յուշատետրեր, սակայն հոն կատարուած արձանագրութիւնները կրնան ծառայել միայն թուականներ ճշդելու համար, որովհետև բացայայտ չեն այդ նօթերը: Օրինակ, արձանագրած է. «Ընդունուեցայ Հանրապետութեան նախագահէն» (թէ ինչո՞ւ համար՝ ո՛չ մէկ ծանօթութիւն): կամ՝ «Անուանուեցայ Գնդապետ», ևլն.:

Կան նաև պաշտօնական գրութիւններու օրինակներ իր զինուորական կեանքին վերաբերեալ՝ պաշտօնի անուանում, աստիճանի բարձրացում, շքանշաններու տուչութիւն և այլ պարագաներ, որոնք Զօրավարը թղթածրարի մը մէջ պահած էր:

Աշխատանքիս երկար ամիսներու տևողութեան, ամէն անգամ երբ ուզեցի գրել դէպքի մը կամ հարցի մը մասին, Զօրավարին հետ իմ առօրեայ խօսակցութեան ընթացքին կ'արժարծէի տուեալ հարցը՝ աւելի լուսաբանուելու համար: Այսպիսով, առանց զգացնելու քաղած տեղեկութիւններովս՝ գրութիւնս ստացաւ աւելի ճշգրիտ և ամբողջական բնոյթ:

ՅԱՄՄԻԿ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ

– Ա. ՄԱՍ –

**ԶՕՐԱՎԱՐ ԱՐԱՄ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆԻ
ՆԿԱՐԱԳՐԻՆ ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԳԻԾԵՐԸ**

Տալէ առաջ Զօրավար Արամ Գարամանուկեանի կենսագրութիւնը, պիտի փորձեմ տալ իր նկարագրին յատկանշական գիծերը: Եթէ ուզէինք բառով մը ներկայացնել զօրավարը, պիտի ըսէինք թէ պարտաճանաչ մէկն էր ան. այսինքն՝ ունէր գիտակցութիւնը մարդու մը բոլոր պարտականութեանց իբր անհատ և իբր անդամ ընտանիքի մը և ազգի մը: Անձ մը, որ իր կարելին կ'ընէր իր պարտականութիւնները իրագործելու համար:

Բնութիւնը Զօրավարը օժտած էր լաւ յատկութիւններով, զորս ինք մշակելով՝ ատակ դարձած էր իր պարտականութիւնները լիուլի կատարելու:

Առնենք այդ յատկութիւններէն մի քանին:

Առաջին կարգին կու գար համեստութիւնը: Անկարելի է երևակայել աւելի համեստ ուէ անձ: Ան չէր անոնցմէ, որոնք գովասանքէ, պատիւէ փախուստ տալու արտաքին երևոյթին տակ իրենց կարելին կ'ընեն որ միշտ փառաբանուին: Կը բարեւէր, կը խօսէր, կ'ընդունէր ամենահասարակ մահկանացուն՝ առանց որեւէ ձևակերպութեան: Հանրային վայրերու մէջ կը խորչէր պատուոյ աթոռներէ: Չէր սիրեր խօսիլ իր անձին մասին և չէր ախորժեր իր մասին եղած գովասանքներէ՝ ըլլային բերանացի թէ գրաւոր: Ամէն անգամ որ իր գովեստը կ'ընէին, կը կարմրէր հին օրերու դեռատի օրիորդներու պէս. բան մը՝ որ զիս կը զարմացնէր սկիզբները: Չէի կրնար հասկնալ որ մարդ մը կրնար այդքան համեստ ըլլալ, մանաւանդ՝ իրեն նման բարձրաստիճան գինուորական մը:

Երբ իր ներկայութեան իր մասին կը խօսուէր, հանդարտօրէն կը դիտէի իր երեսին կարմրիլը և քիչ մը ջղային կերպով գլխուն հակիլը դէպի վար, կարծէք թէ յանցանքի վրայ բռնուած ըլլար այդ վայրկեանին:

Զօրավարը մօտէն ճանչցողները լաւ գիտէին իր նկարագրին այդ կողմը:

Գրութեանս երկրորդ մասին մէջ պիտի անդրադառնամ 1941-ին Սուրիոյ և Լիբանանի մէջ անգլիացիներու և ֆրանսական Վիշիական ուժերու միջև մղուող կռիւներու ընթացքին իր մասնակցութեան: Այն ատեն տեղակալ Ջորավարը իր խիզախ և արդիւնաւոր գործունէութեան համար արժանացաւ յիշատակութեան (citation), որուն կ'ընկերանար Ֆրանսական Պատերազմական Խաչը (croix de guerre):

Այսպէս կը կարդանք յիշատակութեան մէջ. «Իսկական սպայ, որուն անդորրութիւնը և պաղարիւնութիւնը կրակի տակ կը հաւասարին միայն իր համեստութեան»: (Officier autochtone d'un calme et d'un sang froid au feu qui n'ont égal que sa modestie.)

Յիշեմ նաև Տոքթ. Խաչատուրեանի վերը ակնարկուած յօդուածին հետևեալ բառերը. «Թող ներէ ինձի որ համեստ չգտնուիմ վիրաւորելու գնով իր համեստութիւնը»:

Բայց ըսածս պէտք չէ սխալ հասկցուի. Ջորավարին համեստութիւնը կեղծ չէր և չէ՛ր համեստութիւնը տկարներու, երկչոտներու, անյաջողներու. այլ՝ համեստութիւնը իր կարողութեանց և իր արժանիքներուն գիտակից անհատի մը: Դեռատի աղջկայ մը պէս կարմրող և մեծարանքներէ խուսափող այս անձը երբեք չէ ձգած որ «իր ոտքին վրայ քալեն», ինչպէս կ'ըսեն ֆրանսացիք: Լսած եմ իր ընկերներէն, որ պաշտօնի վրայ եղած ատեն, ըլլա՛յ Ֆրանսական հոգատարութեան շրջանին, ըլլա՛յ Սուրիոյ անկախութենէն ետք, միշտ տէր եղած է իր իրաւաստութեանց և յարգել տուած է զանոնք, ինչ որ դիւրին բան չէր՝ եթէ նկատի առնենք երկրին մէջ տիրող պայմանները:

Զէր քաշուեր հարկ եղած դիտողութիւնները ընելու՝ երբ մէկը իրեն հանդէպ անպատշաճ արարքի մը մէջ գտնուէր, մա՛նաւանդ երբ դիմացինը հեղինակաւոր անձ մը ըլլար: Պիտի յիշեմ երկու դէպքեր, որոնք տեղի ունեցան մեր ամուսնութենէն ետք (որովհետև վկայ եղած եմ անոնց), և որոնք ցոյց կու տան թէ Ջորավարը տկար համեստ մը չէր:

1964 թուականին Եւրոպա և Միացեալ Նահանգներ ճամբորդութիւն մը պիտի ընէինք: Ջորավարին մեկնումին համար վարչապետին կողմէ պաշտօնագիր մը պէտք է ստորագրուէր: Մեր մեկնումին օրերը մօտեցած էին, սակայն դեռ սպասուած

Թուղթը չէինք ստացած: Օր մը հանդիպեցաւ վարչապետին գրասենեակը: Վերջինը բացակայ ըլլալուն, անոր ընդհանուր քարտուղարին ըսաւ. «Հաճեցէք ըսել Պրն. Վարչապետին որ Զօրավար Գարամանուկեանը կը զարմանայ որ իր Թուղթին ստորագրութիւնը այսքան կ'ուշանայ»: Հետեւեալ առաւօտ բարձրաստիճան պաշտօնեայ մը եկաւ անձամբ Զօրավարին յանձնելու ստորագրուած արտօնագիրը:

Միւս դէպքը պատահեցաւ հայկական շրջանակի մէջ, մի քանի տարի ետք: Հ.Բ.Ը.Միութեան այդ ժամանակներու ընդհանուր տնօրէնը փոխելու հարց մը կար՝ յիշեալին յառաջացած տարիքին պատճառաւ: Կարգ մը անձեր Զօրավարը յարմար տեսած էին այդ պաշտօնին համար՝ նկատի առնելով իր կարողութիւնները և վարչական գործերու վերաբերեալ բանակի մէջ իր ձեռք ձգած փորձառութիւնը: Դիմեցին իրեն՝ իմանալու համար թէ կ'ուզէ՞ր այդ պաշտօնը ստանձնել: Յօժարեցաւ մի միայն ազգօգուտ արարք մը կատարելու համար, որովհետեւ պէտք չունէր այդ պաշտօնի եկամուտին կամ պատիւին: Յիշեալ անձերէն մին գրեց այս մասին Հ.Բ.Ը.Միութեան նախագահին, որ ուզեց որ Զօրավարը գրաւոր ծանօթութիւններ տայ իր անձին մասին և յայտնէ իր թեկնածութիւնը: Զօրավարը գրեց հարկ եղածը: Անցաւ ժամանակ: Զօրավարը նախագահէն դրական կամ ժխտական պատասխան չստացաւ, ինչ որ իրեն ենթադրել տուաւ որ հարցը ուսումնասիրուելու վրայ է: Սակայն երբ օր մը պատահաբար իմացաւ ընդհանուր տնօրէնի պաշտօնին վրայ անձի մը նշանակումին մասին, նամակով մը քաղաքավար և սակայն խիստ շեշտով դիտել տուաւ Հ.Բ.Ը.Միութեան նախագահին, որ իր վարուելակերպը պատշաճ չէր: Այդպիսի միութեան մը նախագահը իր իսկ փափաքին վրայ զօրավարի մը կողմէ ուղարկուած գրութիւն մը պէտք չէ առանց պատասխանի ձգէր: Նախագահը ջանաց գրութեամբ մը ինքզինք արդարացնել:

Զօրավարին նկարագրի գիծերէն էր նաև բարութիւնը: Հաւանաբար պիտի հարցուի. «Ի՞նչպէս թէ բարի. այս մարդը բոլորին ծանօթ է իբրև ամենախիստ, ամենապահանջկոտ սպան սուրիական բանակին»: Այո, Զօրավարը է՛ր երկուքը միասին: Սակայն ան երկու տարբեր, հակոտնեայ նկարագիրներու տէր

չէր՝ երբեմն բարի և երբեմն ալ խիստ: Այլ՝ բարի էր և խիստ միևնույն ժամանակ: Այս երկու յատկութիւնները իր մէջ լրացուցիչ էին: Ոչ միայն կամաւոր կերպով չարիք չէր հասցուցած ուէ անձի իր կեանքի ընթացքին, այլև իր կարելիութեան սահմաններուն մէջ ջանացած էր միշտ օգտակար ըլլալ ուրիշներուն՝ նիւթապէս և բարոյապէս: Իրեն դիմողները ձեռնունայն չէին դարձած երբեք: Իր խորհուրդները և աջակցութիւնը չէր զլանար, և յաճախ, երբ տեղեակ դառնար մէկու մը կարիքին, ի՛նք ընդառաջ կ'երթար անոր: Մեր ամուսնութենէն ետք քանիցս ներկայ եղած եմ Զօրավարին հանդէպ երախտագիտութեան արտայայտութեանց՝ անցեալին իր ըրած բարիքներուն համար: Եւ քանի որ համեստ էր, քիչեր տեղեակ եղած են իր բարեսիրութիւններուն:

Շատեր ունէին այն կարծիքը, որ Զօրավարը դիւրամատչելի մէկը չէր: Իր բարութիւնը զինք սիրելի դարձուցած էր զինք ճանչցողներուն: Լսած եմ որ զինուորները զինք պաշտելու չափ սիրած են, որովհետև իր տւական մտահոգութիւնը եղած էր անոնց բարօրութիւնը: Իրեն Ապու Ակոբ (Յակոբի հայր) փաղաքշական անունը տուած էին՝ ըստ արաբական սովորութեան, որ մէկը ընտանեբար կոչել կու տայ իր հօր անունին աւելցնելով «Ապու» բառը, քանզի ընդունուած է որ անձ մը իր անդրանիկ մանչին իր հօրը անունը տայ (Զօրավարին հօրը անունը Յակոբ էր): Նոյն այդ զինուորները գիտէին որ իրենց պարտականութիւնները պէտք էր լաւ կատարէին, որովհետև Զօրավարը թէև բարի էր, բայց թերացումները անպատիժ չէր ձգեր: Շատ խստապահանջ էր ան պարտականութեանց լիուրի կատարման տեսակէտէն: Ուստի շատ հեշտ չէր իրեն հետ ապրիլ: Սակայն քանի որ չարութիւնը երբեք մղիչ ուժ մը չէր իրեն համար, այլ՝ ընդհակառակը՝ ինք իր անձին հանդէպ ունեցած խստապահանջութեան պատճառաւ, մարդիկ կը նախընտրէին իրեն պէս մէկու մը հետ գործ ունենալ: Իր հրամանին տակ երկար ատեն պաշտօնավարած հրետանիի Զօրավար Ֆիլիփ Սավայային, որուն յաճախ հանդիպելու առիթ ունեցած եմ, օր մը հարցուցի թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ Զօրավարին պէս պահանջկոտ անձի մը հետ տարիներ գործակցած ըլլալով հանդերձ այսքան սիրով և յարգանքով կ'արտայայտուի իր մասին, կարծէք հրեշտակի մը հետ

աշխատած ըլլար: Պատասխանեց. «Այո՛, պահանջկոտ էր և շատ, սակայն ինք կու տար օրինակը պարտաճանաչութեան: Յետոյ, բարի ըլլալուն՝ արդար էր թէ՛ իր վարձատրութեանց և թէ՛ իր պատիժներուն մէջ: Աւելցուցէք ասոր վրայ որ իր գործը լաւ գիտէր: Ան բացառիկ կարողութեամբ հրետանիի սպայ մըն էր, մի՛շտ տեղեակ նորութիւններուն: Զինուորական վերին իշխանութեանց հանդէպ յարգալիւր էր, սակայն ունէր քաջութիւնը անոնց դիտել տալու ինչ որ կը կարծէր թէ սխալ էր: Ահա՛ այսպիսի պետ մըն էր Զօրավարը, և ահա՛ թէ ինչո՞ւ կը յարգէինք և կը սիրէինք զինք»:

Զօրավարին միւս յատկութիւնը աշխատասիրութիւնն էր: Անխոնջ աշխատող մըն էր ան. եղած էր մի՛շտ: Մայրը կ'ըսէր թէ մանկութեան օրերէն սկսեալ չէր յիշեր վայրկեան մը խակ անոր անգործ կենալը: Ուշիմ ըլլալով, դիւրութեամբ կ'իւրացնէր բան մը. սակայն չէր գոհանար հարեանցի աշխատանքով. իր ըրածը կ'ենթարկէր վերատեսութեան՝ ապահով ըլլալու համար: Մեր ամուսնութենէն ետք զինք բնաւ անգբաղ չեմ տեսած: Կը կարդար շարունակ, ուսումնասիրողի մը պէս կը նօթագրէր կարդացածը՝ երբ կը հանդիպէր բառի մը, անձի կամ վայրի անունի մը, որ անծանօթ էր իրեն: Իսկոյն կը բանար բառարանը կամ համայնագիտարանը: Երբ ընթերցումէ մը յոգնէր, ձեռագիրն աշխատանքով կը զբաղէր, գիրքերը կը դասաւորէր, տան մէջ նորոգութիւն մը կ'ընէր: Կեանքի վերջին շրջանին սկսած էր նաև նկարել:

Արագ և սակայն մէթոտիկ աշխատող մըն էր ան:

Երբ իրաւագիտութեան տոքթորայի աւարտաճառը կը գրէր ան Փարիզ, առնուած նօթերու, լուսապատճէններու (photocopy) էջերուն մէջ չէր կորսուեր: Ամէն ինչ լաւ դասաւորած կ'ըլլար: Առանց վարանումի կը բանար այն թղթածրարը կամ նօթատետրը, ուր կը գտնուէր իրեն պէտք եղած գրութիւնը:

Իր գրածները կամ շինած բաները կը սրբագրէր և երբեմն կը վերսկսէր բոլորովին: Աւարտաճառին մէջ կան էջեր, զորս հինգ անգամ մեքենագրած եմ: Աշխատանքի կը վերսկսէր իր պրպտումներուն մէջ ձեռք բերած նոր ծանօթութիւններու լոյսին տակ: Կ'ուզէր որ իր բոլոր ըրածները

կատարեալ ըլլան: «Քո լաւագոյնը ըրէ՛» առածը կարծէք նշանաբան ըրած էր իրեն:

Պողպատեայ կամք մը կ'ընկերանար իր աշխատասիրութեան, և այս պատճառաւ իր առջև եղած դժուարութիւններն ու անյաջողութիւնները զինք չէին մատներ յուսահատութեան. ընդհակառակը, կարծէք խթան կ'ըլլային որ յարատեւէ իր ձեռնարկին մէջ:

Պատմեմ դրուագ մը: 1963 թուականի աշնան, Զօրավարը արձանագրուեցաւ Պէյրութի Ֆրանսական Համալսարանի իրաւագիտութեան բաժանմունքը: Պատահեցաւ որ տարեշրջանի գլխաւոր քննութեանց մէջ անհրաժեշտ միջինը չունենայ: Այդ օրերուն ան կը վարէր իր քեռայրին Դամասկոսի առևտրական տան տնօրինութիւնը, որ իրմէ շատ ժամանակ կը խլէր՝ ի վնաս իր քննութիւններու պատրաստութեան: Զօրավարին մայրն ու ես ուրախացանք այս ձախողութենէն: Երկուքս ալ նկատի առնելով իր տարիքը (54 տարեկան այդ օրերուն) և առողջութիւնը՝ շատ գոհ չէինք որ համալսարանի դասընթացքներուն հետեւելով աւելի պիտի յոգնէր: Կարծեցինք որ ինք, յուսալքուած արդիւնքէն, պիտի հրաժարէր իրաւագիտութենէն: Սակայն տեսանք թէ Զօրավարը պէտք եղածին չափ լաւ չէինք ճանչցած: Զախողութիւնը ազդած էր իրեն: «Կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով քննութեան մը մէջ ձախողելուս՝ ասիկա ինծի շատ տաժանելի է», ըսաւ ան և փոխանակ յուսահատելով՝ 1964-ի աշնան դարձեալ արձանագրուեցաւ համալսարան: 1968-ին պատուով լրացուց դասընթացքները և ստացաւ Իրաւագիտութեան Licence-ի վկայական:

Աւելցնեմ որ նոյն տարուան Փետրուարէն մինչև Մայիս, ողնայարի ճողուածքի (hernie) հետեւանքով ան ամիսներով անկողին մնաց: Նոյնիսկ ճաշերը կռնակի վրայ պառկած կ'ուտէր: Եւ սակայն այդ վիճակով իսկ պատրաստեց քննութիւնները և կէս մը առողջացած՝ մասնակցեցաւ քննութեանց և յաջողեցաւ: Պէտք է ընդունիլ որ ասիկա զօրաւոր կամքի մը արտայայտութիւնն է:

Եթէ Զօրավարը ունէր իմացական, հոգեկան և մարմնական կարգ մը յատկութիւններ, որոնք օգնած էին իրեն իր կեանքի ընթացքին, ինչպէս՝ ուշիմութիւն, արագ հակազ-

դեցուցիչ (reflex), ստեղծագործ երևակայութիւն, նախաձեռնարկ ոգի, դէպքերու վրայ պատշաճ և արագ ներգործութիւն, պատասխանատուութեան զգացում, ևլն., ապա զօրաւոր կամքի մը միացած աշխատասիրութիւնը կարևորագոյն ազդակը եղած էր կեանքի մէջ իր յաջողութեան:

Զօրավարը քաջ անձ մըն էր: Եթէ այս յատկութիւնը կայանար միայն կռուի ընթացքին արտայայտուած արիասրտութեան մէջ, պիտի չարժէր խօսիլ այդ մասին, որովհետև կարելի չէ երևակայել իսկական զօրավար մը, որ քաջ չըլլայ պատերազմի դաշտին վրայ: Զօրավարին քաջութիւնը ի յայտ կու գար իր ամէնօրեայ կեանքի ընթացքին: Քաջ էր ան ամէն տեսակ դժուարութեան դէմ. քաջ՝ մարդոց ստորնութեան և չարասրտութեան դէմ. քաջ՝ մանաւանդ կարծիքներու արտայայտութեան մէջ: Իր ընկերներէն լսած եմ որ պատահած են դէպքեր, երբ շատեր չէին համարձակեր իրենց խորհածը ըսել, մինչդեռ Զօրավարը միշտ յանդգնութիւնը ունեցած է յայտնելու իր կարծիքը: Նոյնն էր նաև բարեկամական և ընտանեկան շրջանակի մէջ: Ինչ որ կը կարծէր թէ պէտք է ըսուի թերութիւն մը շտկելու, անախորժ եղելութեան մը առաջըր առնելու, անձի մը իրաւունքը ապահովելու համար, կ'ըսէր քաջաբար և անկեղծօրէն՝ առանց նկատի առնելու դիմացինին դիրքը և իր այդ վարմունքին հետևանքով վնաս կրելու հաւանականութիւնը: Կարծիքի արտայայտութեան քաջութիւնը պարտականութիւն կը նկատէր միշտ, մինչև իր կեանքին վերջը:

Իսկական ազգասէր մըն էր Զօրավարը: Ան չէր այն անձերէն, որոնք ազգասիրութիւնը կը քարոզեն. այլ՝ է՛ր անոնցմէ, որոնք իրենց արարքներով ազգասէր կը հանդիսանան: Մեր մօտ ազգասիրութիւնը կը փառաբանուի որպէս մեծ յատկութիւն. Զօրավարը զայն կը նկատէր ամենաբնական և տարրական պարտականութիւն մը: Ան չէր կրնար ընդունիլ որ անձ մը չըլլայ ազգասէր ու ընտանեսէր:

Զօրավարը նաև սուրիացի ազգասէր էր: Ան հարիւր տոկոսով սուրիացի կը զգար ինքզինք: Ուրիշներու նման

միայն երախտագիտական զգացումներով չէ որ կապուած էր Սուրիոյ՝ այդ երկրին հայոց ընծայած ասպնջականութեան համար: Այլ՝ ինքզինք կը նկատէր կատարեալ սուրիացի քաղաքացի: Կը մտածէր ու կը գործէր որպէս պատուաւոր ու պարտաճանաչ քաղաքացի մը, որուն քաղաքացիութիւնը չէր հակասէր իր հայկական ազգասիրութեան: Սուրիացիի և հայու հանգամանքները միաձուլուած էին իր մէջ և իր կեանքին օրինակով ցոյց տուաւ որ կարելի է լաւ սուրիացի և լաւ հայ ըլլալ միևնոյն ժամանակ:

Իր ազգասիրութեան ապացոյցը ան տուաւ իր բանակայինի ամէնօրեայ կեանքին մէջ: Ընտրած էր պատասխանատու ասպարէզ մը, որ կը պահանջէր տուական զոհողութիւն: Ան զոհուեցաւ սպայի իր պարտականութեանց կատարման համար: Իր գունդերուն կազմութիւնը, անոնց զինուորական վարժութիւնը և բարոյական կրթութիւնը, իր ստորադասներուն բարօրութիւնը իր մշտական մտածումի առարկան եղած էին: Այս բոլորին իրականացման համար տարած աշխատանքը և կրած հոգերը պատճառ եղած էին իր առողջութեան մեծապէս տկարացման:

Յիշեմ դէպք մը, որ կրնայ համարուիլ իր սուրիացիի ազգասիրութեան փաստերէն մին: 1945-ին Սուրիոյ մէջ տեղի կ'ունենային ազատագրական կռիւներ հոգատար պետութեան դէմ: Զօրավարը այդ ատեն հարիւրապետ էր և կը հետևէր Փարիզի Պատերազմական Բարձրագոյն Վարժարանի (Ecole Supérieure de Guerre) դասընթացքներուն: Հոն իրեն կ'առաջարկուի մնալ ֆրանսական բանակին մէջ՝ աստիճանի անմիջական բարձրացման խոստումով: Մինչ բնիկ կարգ մը սպաներ ֆրանսական ուժերուն միացած կը մեկնին երկրէն, ինք տարրական պարտք կը համարէ վերադառնալ Սուրիա և հոգուով ու սրտով մասնակցիլ սուրիական ազգային բանակի կազմութեան աշխատանքին: Իր այս արարքը շատ լաւ պիտի գնահատուէր պետական կազմէն և ժողովուրդէն: Պէտք չէ մտահան ընել Զօրավարին վերադարձին կարևորութիւնը հայութեան տեսակէտէն, մանաւանդ եթէ նկատի առնենք որ մի քանի հայ սպաներ աններելի սխալը գործած էին ֆրանսական ուժերուն միանալով Սուրիայէն հեռանալու:

Գալով հայկական ազգասիրութեան, իր մտածելակերպն ու գործելակերպը հետևեալ ձևով կարելի է ներկայացնել.– Ըլլա՛լ երկրին տիպար քաղաքացի, սակայն միևնոյն ժամանակ պահել իր հայութիւնը: Իր այս համոզումին իբրև բնական հետևանք, դէմ էր ան հայկական կուսակցութիւններու գոյութեան և գործունէութեան սփիւռքի մէջ: Ըստ Զօրավարին, սփիւռքի մէջ ապրող հայուն քաղաքական գործունէութիւնը տեղական քաղաքականութիւնը պէտք է ըլլայ. ուրեմն, քաղաքականութեամբ զբաղող հայ մը պէտք է գործէ երկրին մէջ գոյութիւն ունեցող տեղական կուսակցութիւններու շարքերուն մէջ: Ազգապահպանման հարցը կուսակցական հարց չէ գաղթօճախներու մէջ, այլ՝ համազգային հարց մը, որով պէտք է զբաղի համազգային հանգամանք ունեցող որևէ կազմակերպութիւն: Կրթական, մարզական, գեղարուեստական, բարեգործական կազմակերպութիւններ պէտք է ունենանք սփիւռքի մէջ, սակայն ո՛չ կուսակցութիւն:

Այս տեսակէտը ունենալուն համար, ոչ մէկ կուսակցութեան անդամակցած է ան՝ ըլլա՛յ գինուորական ասպարէզ մտնելէ առաջ, ըլլա՛յ անոր ընթացքին, և ըլլա՛յ հանգստեան կոչուելէ յետոյ: Ունէր հայ կուսակցական ազգականներ ու բարեկամներ, որոնց հետ կ'ապրէր սիրալիր, սակայն առանց խուսաբելու դիտել կու տար անոնց, երբ առիթը կը ներկայանար, ինչ որ իր կարծիքով սխալ էր անոնց գործունէութեան մէջ: Ասիկա եղած էր իր հօրը վարուելակերպը, ինչպէս նաև իր երկու եղբայրներունը: Գարամանուկեան ընտանիքը առանց կուսակցական մը իսկ տալու՝ տուած է լաւ հայեր, որոնցմէ իւրաքանչիւրը իր ձևով օգտակար եղած է իր ազգին: Իր ընտանիքին մէջ հայ լեզուի և հայ եկեղեցւոյ հանդէպ գտնուած սէրը Զօրավարը իւրացուցած է մանկութեան օրերէն և անոր հաւատարիմ մնացած է մինչև վերջ:

1923-ին, երբ Հալէպի Հայկազեան Վարժարանէն շրջանաւարտ կ'ելլէր ան, կ'ըլլայ տարեվերջի շրջանաւարտից հանդէսին աւարտաճառ (անունը մեծ է, բայց իսկութեան մէջ եղածը շարադրութիւն մ'ըն է) ընթերցող երկու աշակերտներէն մին: Իր ընտրած նիւթն էր «Հայ Ազգին Գոյութեան Ազդակները», որոնք ըստ իրեն հայ լեզուն և եկեղեցին էին: Զօրավարին մայրը պահած էր այդ գրութիւնը, որ պատանի

Արամ Գարամանուկեանը վերջացուցած էր Հայ բանաստեղծին հետևեալ տողերով.

Հայ ապրինք, եղբայրք, մարդկութեան մէջը,

Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը,

Հայ անուամբ զմեզ կ'ողջունէ երկինք,

Եղբայրք, հայ ապրինք, եղբայրք, հայ մեռնիւնք:

Ահաւասիկ այդ գրութիւնը իր ամբողջութեամբ.-

Հայ Ազգին Գոյութեան Ազդակները

Աշխարհի վրայ շատ ազգեր եկած են ու գացած, այսօր անոնց անունները միայն պատմութեան էջերուն մէջ մնացած են: Հայ ազգն ալ հին, դարատու ազգ մըն է, Քրիստոսէ եօթը-ութը դարեր առաջ պետութիւն ունեցող ազգ մը: Հայ բանակներ պահելով պետական փառատու շրջաններ բոլորած ատեն, այսօրուայ քաղաքակիրթ աշխարհին տիրապետող Ամերիկան, Եւրոպան կը քնանային խոր տգիտութեան խաւարին մէջ: Հայը կանուխ արթնցած ըլլալով աշխարհի քաղաքակրթութեան առաջնորդը ըլլալու կոչուած էր: Քանի քանի անգամներ իր քաղաքական անկախութիւնը կորսնցնելէ յետոյ, դարձեալ վերստացած է զայն, սակայն իր աշխարհագրական դիրքը զինք ստիպեց ընկրկիլ, իրարու յաջորդող բարբարոսական յարձակումներու առջև կորսնցուց իր թագն ու գահը, կորսնցուց իր բանակն ու զինուորը, ցրի ցրի սփռուեցաւ իր հայրենիքէն դուրս՝ օտար երկիրներ, և սակայն չկորսնցուց իր ինքնութիւնը. ուր որ գնաց կրեց իր ազգային դրոշմը, մնաց հայ:

Մեր ազգը կ'ապրի դարերէ ի վեր, կ'ապրի առանց հայրենիքի, կ'ապրի առանց բանակի, կ'ապրի զուլումներու, հալածանքներու, ջարդերու, արիւններու, արցունքներու մէջ..., մինչդեռ իր քաղաքական կեանքի ընկեր շատ մը ազգեր մեռա՞ն կորա՞ն. ո՞ր է այսօր Բաբելոնի ժողովուրդը, ո՞ր է Փիւնիկեցին, ո՞ր է Ասորեստանցին: Մեր ազգը ապրած է ու պիտի ապրի տակաւին, քանի վառ պահէ իր գոյութիւնը ապահովող տարրերը:

Հայ լեզուն և հայ եկեղեցին, ահա հայութեան



Զօրավար Գարամանուկեան և իր քոյրը՝ Ալիս (հետագային Տկն. Երուանդ Տէմիրճեան), իրենց վկայականներով—29 Ապրիլ 1923:
General Karamanoukian and his sister Alice (future Mrs. Yervant Demirdjian), with their diplomas—April 29, 1923.

*գոյութեան ազդակները: Ահա աշխարհի անդիի ծայրը
բնակող հայը Հայաստանի հայու սրտին միացնող, ահա
Հնդկաչինի մէկ անկիւնը բնակող հայուն սիրտը Սուրիոյ մէջ
տարագիր դեգերող հայուն համար բարբախել տուող ազ-
դակները:*

*Հայեր, յարգը գիտնանք այն լեզուին զոր կը խօսինք,
ոչ թէ օտարներու առջև քաշուելով այլ պարծանքով խօսինք
զայն, թո՛ղ հայ ընտանիքներու մէջ միշտ հայերէնը հնչէ իր
ոսկի հնչիւններով, թո՛ղ հայ մանուկներու շրթունքներուն սի-
րելի երգն ըլլայ հայ բանաստեղծին սա տողերը.*

*Ո՛ր մեծասքանչ դու լեզու,
Ո՛ր հեշտ բարբառ մայրական,*

Փափկահնչիւն բառերուդ

Նման արդեօք այլ տեղ կա՞ն:

Սիրենք, պաշտենք ու պաշտպանենք հայ կրօնը, Հայաստանեայց եկեղեցին: Հայը ուր որ ալ երթայ, իր հետը ունի զոյգ մը չքնաղ ասպահովութեան լողակներ՝ որոնց եթէ տէր ըլլայ, պիտի ազատի տիեզերական այս նաւաբեկութիւններէն ու փոթորիկներէն, այո՛, անվթար պիտի հասնի հայ ազգը խաղաղ նաւահանգիստը, իր ազգային դրոշմը ճակտին, անկախութեան դրօշ մը ձեռքին:

Ուստի, ուր որ ալ լինինք ասպաստանինք հայ եկեղեցիին թւերուն մէջ, ինչ ալ ըլլանք խօսինք հայ լեզուն:

Հայ ապրինք, եղբայրք, մարդկութեան մէջը,

Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը,

Հայ անուամբ զմեզ կ'ողջունէ երկինք,

Եղբայրք, հայ ապրինք, եղբայրք, հայ մեռնինք:

Զօրավարին ազգասիրութեան կարևոր արտայայտութիւնը, ըստ իս, անոր սուրիական բանակին մէջ ստացած դիրքն է: Իբրև արդիւնք իր անձնուէր և օգտաչափ գործունէութեան, որ այնքան սուղ արժած է իր առողջութեան, սուրիահայութեան ապահովելով զօրավար մը: Հրամանատարը երկրին հրետանին՝ Զօրավար Գարամանուկեան, հայութեան ծառայեց ցոյց տալով արաբ ժողովուրդին որ իր ազգակիցները օգտակար և հաւատարիմ քաղաքացիներ են Սուրիոյ: Բայց յիշեմ մի քանի դէպք, երբ ան ուղղակի գնահատելի ծառայութիւն մատուցանեց սուրիահայութեան:

Հետեւելը լսեցի Դամասկոսի յայտնի ազգայիններէն, Սուրիոյ խորհրդարանի նախկին անդամ Պրն. Ն. Եագուպեանէ: 1948-ին, արաբներու և հրեաներու միջև տեղի ունեցած կռիւներու ընթացքին, օտար տարրեր Դամասկոսի մէջ սուտ լուրեր կը տարածեն թէ իբրև թէ հայեր Պաղեստինի մէջ կը գործակցին հրեաներու հետ: «Մենք վախցանք,- ըսաւ Պրն. Եագուպեան,- որ անախորժ դէպքեր տեղի ունենան հայերու հանդէպ հոս, ռամիկ տարրերու կողմանէ, իբրև հետեւանք այդ սուտ լուրերուն: Այդ օրերուն Զօրավարը քաջարի և արդիւնաւոր գործունէութիւն ունեցած էր սուրիական ճակատի վրայ: Երկրին մէջ ամէն մարդ կը խօսէր հրետանի

հայ սպայի մը արարքներուն մասին: Արաբ հայրենակիցներ կու գային և կը շնորհաւորէին հայերս ատոր համար: Սուտ լուրերը Պաղեստինի հայերուն մասին մոռցուեցան և հայերը յիշուեցան իբրև հաւատարիմ ծառաներ արաբական դատին»:

Ինքզինքիս թոյլ կու տամ դիտել տալու ուր Պրն. Եագուպեան այս դէպքը պատմեց Դամասկոսի մէջ, 1961-ի Դեկտեմբերին, երբ Զօրավարին այցելեց ուրիշ ազգակիցներու հետ՝ զինք շնորհաւորելու համար սուրիական սահմանադիր ժողովի անդամ ընտրուելուն առթիւ: Երեք տարի եղած էր մեր ամուսնանալուն, բայց Զօրավարը բան չէր ըսած ինծի այդ մասին:

Ուրիշ դէպք մը ևս: 1953-ին, Սուրիոյ օրուան կառավարութիւնը կարգ մը սեղմումներ կատարած էր հայ դպրոցներու մէջ հայերէնի ուսուցման վերաբերեալ: Հալէպի հայոց առաջնորդ եպիսկոպոսը դիմած էր կառավարութեան, որպէսզի միջոցառումները մեղմացուին, սակայն արդիւնքի չէր հասած: Ուստի խօսած էր Զօրավարին, որ դիմած էր օրուան վարչապետին (զինուորական մը) և ձեռք բերած էր գոհացուցիչ պայմաններ հայ դպրոցներուն համար: Զօրավարը, միշտ համեստ, իր միջամտութեան մասին բան չէր պատմած ուէ մէկու և, ըստ սովորութեան, արդիւնքը վերագրուած էր հայոց առաջնորդին: Շատ տարիներ ետք, երբ դարձեալ հայ դպրոցներու հարց մը ծագեցաւ, Զօրավարը ունեցաւ բացազանչութիւն մը, որմէ հետեցուցի թէ լեզուին տակ բան մը կար: Երբ պնդեցի, ակամայ պատմեց 1953-ի պատահարը:

ԶՕՐԱՎԱՐԻՆ ՆԿԱՐԱԳՐԷՆ ՄԻ ՔԱՆԻ ՈՒՐԻՇ ԿԷՏԵՐ ՀԱԿԻՐՃ ԿԵՐՊՈՎ

Պարզ մէկն էր ան, մանուկի հոգիով: Համոզուելու համար՝ տեսնելու էր զինք կրկէսի մը մէջ հտպիտի մը ելոյթի ընթացքին: Թէև քաղաքավար էր ու մարդամօտիկ, բայց նաև վերապահ էր: Զէր ախորժեք բազմութենէ և կը նախընտրեր գտնուիլ քանի մը բարեկամներու հետ՝ փոխան ընդարձակ սրահի մը: Զգայուն սիրտ մը ունէր: Սիրահար էր բնութեան գեղեցկութեանց, հոսուն ջուրերուն, ծովի ալիքներուն, վայրի

ծաղիկներուն և անտառներուն: Իր զարմիկներէն Փրանսաբնակ բանաստեղծ Յ. Ադայեան Զօրավարին նուիրած էր «Թաւջութակի վրայ» անունով իր գրքոյկը հետեւեալ մակագրութեամբ. «Թանկագին զարմիկ, որքան ալ զինուոր ըլլաս, աւաղ, հոգիիդ խորքը բանաստեղծ մըն ես դուն»: Զարմիկը չէր սխալած: Զօրավարը բանաստեղծի մը զգայնութիւնն ունէր՝ առանց կեանքին մէջ տող մը անգամ բանաստեղծութիւն գրած ըլլալու: Թերեւս ոմանց տարօրինակ թուի ըսածներս. ի՞նչպէս զինուորական մը կրնայ զգայուն հոգի ունենալ: Զէ՞ որ երբ զինուորական ըսուի՝ մարդ կ'երեւակայէ բիրտ, անզգայ արարած մը: Իրականութիւնը այն էր որ Զօրավարը ներկայացուցած իս նման զգայուն էր:

Հաւատացեալ էր ան, սակայն ո՛չ կրօնամոլ: Ազատամիտ կերպով կը հաւատար: Կը յարգէր բոլոր կրօնքները և յարանուանութիւնները՝ մարդը դատելով իր վարմունքէն և ո՛չ թէ անոր դաւանած կրօնքով: Հայ Առաքելական Եկեղեցւոյ հաւատարիմ գաւակ, գիտակից անոր անցեալ մեծ դերակատարութեան՝ մշակոյթի և ազգապահպանման տեսակէտէն՝ վերջին տարիներուն քիչ մը հեռու կը մնար կարգ մը կրօնաւորներու վարքին և գործունէութեան պատճառաւ, բացառութիւնները յարգելով հանդերձ: Վերջին տարիներուն եկեղեցի կ'երթար պարտականութիւն մը կատարած ըլլալու համար, պսակի և թաղումի առթիւ, բացի Ծնունդէն, Զատիկի Ճրագալոյցէն և դռնբացէքէն, որոնց արարողութիւններուն միշտ ներկայ կ'ըլլար: Շատ կը սիրէր հայ եկեղեցական երաժշտութիւնը:

Բնութիւնը զինք օժտած էր տրամաբանող նկարագրով: Փրանսական կրթութիւնն ու երկար տարիներու բանակային ծառայութիւնը շեշտած էին այդ բնատուր ձիրքը իր մէջ: Կատարեալ «քարդէսեան» (cartésien) մըն էր: Ունէր նաև Փրանսացիներու սրամտութիւնը (esprit): Ըսի արդէն թէ կռուի դաշտին վրայ իր պաղարիւնութիւնն ու անդորրութիւնը գնահատուած էին իր պետերէն: Այդպէս էր միշտ կարևոր պարագաներու և լուրջ հարցերու դիմաց: Սակայն պէտք չէ հետեցուի թէ Զօրավարը դանդաղաշարժ և անհոգ մէկն էր:

Ընդհակառակը, իր հակազդեցութիւնները շատ արագ էին՝ թէ՛ խօսքով, թէ՛ որոշումներ կայացնելով: Հակառակ ատոր, անոնք ունէին խոր մտածումի ճշգրտութիւն և արդիւնաւորութիւն: Կարծեմ ասիկա արդիւնք էր իր միշտ աշխատող միտքին՝ որպէս հակասութիւն իր անտարբեր քալողի կամ հանդարտ արտաքին երևոյթին: Պէտք է խոստովանիմ որ վերջին տարիներուն իր զգայնութիւնը և արագաշարժ ներգործութիւնը քիչ մը դիւրագրգիռ դարձուցած էին զինք, բայց բնաւ կարևոր արարք մը չկատարեց կամ որոշում մը չտուաւ այդպիսի հոգեվիճակներու ատեն:

Զօրավարին նկարագրին կարևոր կէտերը ներկայացնելէ ետք, և տալէ առաջ անոր համառօտ կենսագրութիւնը, հարկ է նաև խօսիլ անոր ընդհանուր զարգացումին մասին: Միակողմանի չէր այդ զարգացումը՝ ինչպէս յաճախ կը պատահի կարգ մը ասպարէզներու հետևողներու մօտ: Զօրավարին գիտութիւնը կատարեալ էր և միշտ à la page ո՛չ միայն իր մասնագիտութիւնը եղող հրետանիի և անոր յարակից ճիւղերուն, այլ նաև ռազմավարութեան մէջ: Ան միւսնոյն ատեն ունէր լայն ընդհանուր զարգացում:

Աշխարհագրական, պատմական, կրօնական, ընկերային, տնտեսական և գիտական հարցեր իրեն համար տևական ուսումնասիրութեան նիւթեր էին: Շատ կը սիրէր ճամբորդել ո՛չ միայն իբրև զբօսաշրջիկ, այլ նաև իբրև ուսումնասիրող: Ճամբորդութիւնները կը կազմակերպէր զինուորական գործողութեան մը պէս: Այցելելիք երկրին մասին կը կարգար ինչ որ գրուած էր համայնագիտարաններու և զբօսաշրջային գրքոյկներու մէջ, և կ'որոշէր ուղեգիծը՝ զայն տեղւոյն վրայ փոխելով ի հարկին: Քաղաք մը հասնելէ ետք չէր գոհանար այցելելով միայն ճամբորդական գործակալութիւններու կողմէ նշուած տեսարժան վայրերը. կը շրջագայէր աղքատ թաղերը, կը մտնէր գործարաններէ ներս, կը դիտէր շինարարական աշխատանքները, ներկայ կ'ըլլար ժողովրդային ցոյցերու: Կ'աշխատէր կարելի եղածին չափ շփման մէջ մտնել այցելած երկրին ժողովուրդին հետ: Կողմնակից էր միջազգային լեզուի մը գոյութեան և անոր պարտադիր ուսման բոլոր երկիրներու մէջ, որպէսզի մարդ ուր որ ալ երթայ՝ կարողանայ հաղոր-

դակցել ուրիշ մարդու մը հետ: Եղած է ևրոպական գրեթէ բոլոր երկիրներու, ինչպէս նաև Հիւսիսային Ամերիկայի և հիւսիսային Ափրիկէի երկիրներուն մէջ: Շատ կը փափաքէր այցելել Ծայրագոյն Արևելք:

Երաժշտասէր էր: Սուրիոյ մէջ ստիպուած կ'ըլլար գոհանալու երաժշտութիւնը լսելով երգապնակներէն կամ ուտիոկայաններէն: Ճամբորդութեանց ընթացքին, առիթ չէր փախցներ յաճախելու համերգներու և օփերաներու: Երբ քաղաք մը հասնէր, պանդոկ տեղաւորուելէն ետք առաջին գործը կ'ըլլար տուեալ քաղաքին մէջ անցնելիք բոլոր գիշերներուն համար ճարել թատերական և երաժշտական ելոյթներու տոմսակներ:

Կը հետաքրքրուէր նաև նկարչութեամբ, բայց մնացած էր դասական: Արդի նկարիչներէն ոմանց գործերը, հակառակ անոնց միջազգային համբաւին (օրինակ՝ Փիքասօ, Շակալ, Լէն.), ընդունելութիւն չէին գտներ իր մօտ: Իրեն համար նկար մը պէտք է արտայայտէր մարդը կամ բնութիւնը այնպէս ինչպէս որ են, կամ ներկայացնէր ըմբռնելի գաղափար մը:

Գրականութիւնը իր պաշտամունքին առարկան էր, եթէ կարելի է այսպէս ըսել: Ունէր ոչ շատ ճոխ, բայց ընտիր գիրքերու շարք մը՝ Հոմերոսէն մինչև Հէմինկուէյ: Բացի քիչ թիւով անգլերէն հրատարակութիւններէ, իր գիրքերուն մեծամասնութիւնը Ֆրանսերէն էր: Այդ լեզուով կը կարդար միջազգային գրականութեան գոհարները: Իր ամէնէն շատ սիրած հեղինակն էր Անաթոլ Ֆրանսը, որուն զգայնութիւնը, սրամտութիւնը, անթերի, ներդաշնակ ու պարզ գրելու ոճը իր յաճախակի ընթերցումներուն առարկայ կ'ըլլային:

Գալով հայ գրականութեան, լաւ ծանօթ էր անոր և մօտէն կը հետևէր նորութիւններուն հայրենիքի թէ սփիւռքի մէջ:

Ահաւաստիկ հետաքրքրական միջադէպ մը: 1963-ին Սիլվա Կապուտիկեանի Հալէպ այցելութեան ընթացքին, անոր ի պատիւ տրուած ճաշկերոյթի մը մէջ, Զօրավարին տեղ տուած էին բանաստեղծուհին մօտ: Երեկոյթի վերջաւորութեան, օրուան դամատան սրահին մէջ գտնուողները ներկայացուց Տիկին Սիլվային: Երբ հայ բժիշկի մը հետ ամուսնացած Ֆրան-

սուհի մը մօտեցաւ օրուան հիւրին, դամատան նշեց. «Տիկինը Ֆրանսուհի է»: Զօրավարը աւելցուց. «Մարտէյէզը Հայկական Գիւղում»՝ ականարկելով բանաստեղծուհիին մէկ գրութեան, ուր հայու հարս եղած Ֆրանսուհին, իր կեսրայրին խնդրանքին ընդառաջելով, խնձոյքի մը ատեն կ'երգէ «Մարտէյէզ»ը Հայաստանի գիւղերէն մէկուն մէջ: Տիկին Սիլվա դարձաւ Զօրավարին և ըսաւ. «Գեներալ և այսքան գրասէ՞ր. դեռ չեմ հանդիպել»: